ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի Մարզի և Բելառուսի Հանրապետության Բրեստի Մարզի միջև առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության Արարատի Մարզը և Բելառուսի Հանրապետության Բրեստի Մարզը (այսուհետ՝ Կողմեր), նպատակ ունենալով կառուցել և զարգացնել իրավահավասարության և փոխադարձ վստահության վրա հիմնված գործընկերային հարաբերություններ՝

Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության տարբեր բնագավառների զարգացմանը նպաստող գործող պայմանագրերին համապատասխան,

ուշադրության առնելով Հայաստանի Հանրապետության Արարատի և Բելառուսի Հանրապետության Բրեստի մարզերի միջև հիմնված բարեկամական հարաբերությունները,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը կձգտեն զարգացնել իրավահավասարության, փոխըմբռնման, հարգանքի և վստահության վրա հիմնված երկարաժամկետ, բազմակողմանի առևտրատնտեսական և գիտատեխնիկական կապեր:

Հոդված 2

Կողմերը կօժանդակեն Հայաստանի Հանրապետության Արարատի և Բելառուսի Հանրապետության Բրեստի մարզերի տնտեսվարող սուբյեկտների միջև կապերի հիմնմանը՝ նպատակ ունենալով խրախուսել փոխշահավետ համագործակցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտադրական կոոպերացիայի հարցերին և համատեղ ձեռնարկությունների ստեղծմանը:

Հոդված 3

Կողմերը տարբեր ձևերով աջակցություն կցուցաբերեն տնտեսական համագործակցություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներին, մասնավորապես՝ համատեղ նպատակային ծրագրերի և նախագծերի մշակման և իրականացման, ներդրումային համագործակցության զարգացման, ցուցահանդես-տոնավաճառային միջոցառումների կազմակերպման միջոցով:

Հոդված 4

Կողմերի փոխհարաբերությունները կիրականացվեն տնտեսվարող սուբյեկտների միջև կնքվող համապատասխան պայմանագրերի, համաձայնագրերի, արձանագրությունների հիման վրա, ընդ որում՝ դրանք ստորագրած իրավաբանական անձինք լիակատար պատասխանատվություն են կրում իրենց պարտականությունների կատարման համար:

Հոդված 5

Կողմերն իրականացնում են տեղեկատվության փոխանակում կապված ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող հարցերի, միջազգային ներդրումների, ինչպես նաև այլ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցերի հետ:

Կողմերը պարտավորվում են միմյանց ժամանակին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության և Բելառուսի Հանրապետության օրենսդրություններում կատարված փոփոխությունների մասին, որոնք կարող են ազդեցություն ունենալ սույն Համաձայնագրի կատարման վրա:

Հոդված 6

Կողմերը աջակցություն կցուցաբերեն իրենց տարածքներում իրավաբանական անձանց ներկայացուցչությունների փոխադարձ բացմանը՝ ձեռք բերված երկկողմանի պայմանավորվածություններին համապատասխան և կօժանդակեն նրանց գործունեության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

Հոդված 7

Կողմերից յուրաքանչյուրը գործող օրենսդրությանը համապատասխան կձգտի իր տարածքում տնտեսվարող սուբյեկտների համար ապահովել բարենպաստ պայմաններ՝ առևտրատնտեսական և գիտատեխնիկական համագործակցություն իրականացնելու համար:

Հոդված 8

Կողմերը մտադիր են իրականացնել տեղեկատվության փոխանակում մշակույթի և արվեստի հաստատությունների աշխատանքային փորձի, իրենց տարածքներում ազգային համայնքների ստեղծագործական գործունեության վերաբերյալ:

Կողմեր կձևավորեն և կխորացնեն կապերը կրթության, առողջապահության, բնակչության սոցիալական պաշտպանության, սպորտի և զբոսաշրջության բնագավառներում:

Հոդված 9

Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործողության մեջ կլինի այնքան ժամանակ, մինչև Կողմերից մեկը գրավոր չծանուցի մյուս Կողմին նրա գործողությունը դադարեցնելու իր մտադրության մասին: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը դադարեցվում է ծանուցումը մյուս Կողմի ստանալու օրվանից երեք ամիս հետո:

Կատարված է Բրեստ քաղաքում 2011 թվականի ապրիլի 11-ին երկու բնօրինակով՝ յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն, ընդ որում՝ երկու օրինակն էլ ունեն միևնույն ուժը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ	ԲԵԼԱՌՈՒՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԿՈՂՄԻՑ՝	ԲՐԵՍՏԻ ՄԱՐԶԻ ԿՈՂՄԻՑ՝ ԲՐԵՍՏԻ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ	ՄԱՐԶԱՅԻՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ
Է.Ս.ԲԱՐՍԵՂՅԱՆ	ՆԱԽԱԳԱՀ Կ.Ա.ՍՈՒՄԱՐ